ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

<<ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ>> ՓԲԸ 03.16.2018թ. ԹԻՎ 226-Ա ՀՐԱՄԱՆՈՎ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ 2 մայիսի 2018թ.,
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33) ժամը 17:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝

Գ. Սիմոնյան ՏԱ տնօրեն

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝

Ս. Բաղդասարյան ՕԵԿզ ՀԿԾ պետ

Վ.Ասրյան ՕԵԿ ՏԿ ղեկավար

Հանձնաժողովի բացող անդամներ՝

Ա. Օհանյան <<Աշտարակ>> ՏԿ ղեկավար

Հ.Մելիքբեկյան ՕԵԿ ՏԿ առաջատար ինժեներ

Հանձնաժողովի քարտուղար

Գ. Սարգսյան ՊԳՀԾ մասնագետ

Օրակարգ

1. <<ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ>> ՓԲԸ կարիքների համար Երևան ՕԵԿ կենտրոնի «Գալակտիկա» ՕԵՍ ավտոմատացված համակարգի և կարգավարական վարժասարքի ու «Գյումրի» ԱԿԿ-ի համար «Գալակտիկա» ՕԵՍ ավտոմատացված համակարգի սարքավորումների հետերաշխիքային սպասարկման ծառայությունների գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի բացում և գնահատում

Գ. Սարգսյանը տեղեկացրեց, որ գնումն իրականացվել է էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով:

Հանձնաժողովի նախագահը հրապարակեց տվյալ գնման առարկայի նախահաշվային գինը 71 000 000 ՀՀ դրամ:

Գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ Ընկերության կարիքների համար <<ՀԱՆ-ԲՄԾՁԲ-01/18>> ծածկագրով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել <<Ազիմուտ>> ԲԸ (հասցե՝ Ռուսաստան, ք. Մոսկվա 125167, Նառիշկինսկայա նրբ., 5շ.,Կ.2, հեռ. +7(495)9263769):

Հրապարակվեց <<Ազիմուտ>> ԲԸ գնային առաջարկը՝ 118000 եվրո: Հիմք ընդունելով <<ՀԱՆ-ԲՄԾՁԲ-01/18>> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.5 կետը, ամրագրվեց մասնակցի գնային առաջարկը՝ 68440000ՀՀ դրամ (կից ներկայացվում է ՀՀ կենտրոնական բանկի կայքից կատարված քաղվածքը):

Հանձնաժողովը քննարկման արդյունքում ***միաձայն որոշեց.***

1. Ընկերության կարիքների համար <<ՀԱՆ-ԲՄԾՁԲ-01/18>> ծածկագրով Երևան ՕԵԿ կենտրոնի «Գալակտիկա» ՕԵՍ ավտոմատացված համակարգի և կարգավարական վարժասարքի ու «Գյումրի» ԱԿԿ-ի համար «Գալակտիկա» ՕԵՍ ավտոմատացված համակարգի սարքավորումների հետերաշխիքային

սպասարկման ծառայությունների գնման ընթացակարգի մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<Ազիմուտ>> ԲԸ-ին,

2. Հանձնարարել հանձնաժողովի քարտուղարին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել <<ՀԱՆ-ԲՄԾՁԲ-01/18>> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ բաժնի 8.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումը,

3. Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովին ներկայացնել <<ՀԱՆ-ԲՄԾՁԲ-01/18>> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

4.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել հրավերի 1-ին մասի 8-րդ բաժնի 8.2 և 8.17 կետերի համաձայն՝ <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲ ընկերությունում:

Գ.Սիմոնյան		Հանձնաժողովի նախագահ
Ս. Բաղդասարյան		Հանձնաժողովի անդամ
Վ. Ասրյան		Հանձնաժողովի անդամ
Ա. Օհանյան		Հանձնաժողովի անդամ
Հ.Մելիքբեկյան		Հանձնաժողովի անդամ
Գ. Սարգսյան		Հանձնաժողովի քարտուղար